# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 50

**ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 Թ-Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի պահանջով.***

**Ավագանին որոշում է՝**

Հաստատել 2017 թ-ի սեպտեմբերի 11-ի նիստի օրակարգը:

1. Զառիթափ համայնքի վարչական սահմաններում գտնվող ծածկագիր՝ 10-022-022-0030 0.03 հա հողատեսքի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
2. Զառիթափ համայնքի վարչական սահմաններում գտնվող ծածկագիր՝ 10-022-0218-0022 0,119 հա այգի և ծածկագիր՝ 10-022-0218-0022 0,117 հա վարելահողի հողատեսքի նպատակային նշանակության փոխելու մասին:
3. <<Արմենտել>> ՓԲԸ-ի հետ կնքված նախկին պայմանագրերի գործողության ժամկետը երկարաձգելու մասին:
4. Զառիթափ համայնքի 2017 թ. բյուջեի ծրագրային և ծախսերի տնտեսագիտական հոդվածների միջև վերաբաշխում կատարելու մասին:
5. Զառիթափ համայնքի Զառիթափ բնակավայրում գտնվող ծածկագիր՝10-022-0321-0001 0,46918 հա այլ հողատեսքը աճուրդով վաճառքի ներկայացնելու մասին:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

1.ԱՍԼԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
2.ԲԱԲԱՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ
4.ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ԴԱՎԹՅԱՆ ԴԱՎԻԹ
6.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԻՐԱԲ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՄՈՒԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՁԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Ձառիթափ, (0282) 91507

# Ո Ր Ո Շ Ու Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 51

## ՁԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 10-022-0225-0030 0,03 ՀԱ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով.***

**Ավագանին որոշում է՝**

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Ձառիթափ համայնքի Ձառիթափ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսված փոփոխությանը՝ ըստ որի նախատեսվում է համայնքի վարչական տարածքում գտնվող ծածկագիր՝ 10-022-0225-0030 0,03 հա արոտը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կապի օբյեկտների հողեր գործառնական նշանակության:
2. Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործարքը:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

1. ԱՍԼԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
2. ԲԱԲԱՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ԴԱՎԹՅԱՆ ԴԱՎԻԹ
6. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԻՐԱԲ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 52

**ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 10-022-0218-0020 0,119 ՀԱ ԱՅԳԻ ԵՎ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 10-022-0218-0022 0,117 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՀԱՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով.***

**Ավագանին որոշում է՝**

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Զառիթափ համայնքի Զառիթափ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսված փոփոխությանը՝ ըստ որի նախատեսվում է համայնքի վարչական տարածքում գտնվող ծածկագիր՝ 10-022-0218-0020 0,119 հա այգին և ծածկագիր՝ 10-022-0218-0022 0,117 հա վարելահողը փոխադրել հասարակական կառուցապատման կատեգորիա:

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործարքը:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

1.ԱՍԼԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
2.ԲԱԲԱՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ
4.ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ԴԱՎԹՅԱՆ ԴԱՎԻԹ
6.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԻՐԱԲ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 53

## <<ԱՐՄԵՆՏԵԼ>> ՓԲԸ-Ի ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՆԱԽԿԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով.***

**Ավագանին որոշում է՝**

Տալ համաձայնություն
<<Արմետել>> ՓԲԸ-ի կողմից հեռահաղորդակցության կայանների համար Խնձորուտ և Արտավան բնակավայրերում 0,01 հա մակերեսներով հողամասերի 06.09.2011 թ.-ին և 24.10.2011 թ.-ին կնքված վարձակալության պայմանագրերի գործունեության ժամկետը երկարաձգել 5 տարով՝ կնքելով լրացուցիչ համաձայնագրեր:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

1. ԱՍԼԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
2. ԲԱԲԱՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ԴԱՎԹՅԱՆ ԴԱՎԻԹ
6. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԻՐԱԲ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՄՈՒԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 54-Ն**

## ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով համայնքի կարիքների համար կապիտալ ծախսերի կատարման, ինչես նաև համայնքապետարանի ապարատի պահպանման և այլ ծախսերի իրականացման անհրաժեշտությունից
Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով.

**Ավագանին որոշում է՝**

1. Բյուջետային ծախսերում կատարել 47000000 /քառասունյոթ միլիոն/ դրամի չափով նվազեցումներ, որից՝

ա/ Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 6 խմբի 1 դասի տնտեսագիտական դասակարգման 5113 <<Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում>> հոդվածի տարեկան գումարը նվազեցնել 29000000 /քսանինը միլիոն/դրամով, սահմանելով 1000000/ մեկ միլիոն/ դրամ, իսկ տնտեսագիտական դասակարգման 5134 <<Նախագծահետազոտական ծախսեր>> հոդվածի տարեկան գումարը նվազեցնել 2000000 /երկու միլիոն/ դրամով՝ սահմանելով 363700/երեք հարյուր վաթսուներեք հազար/ դրամ:

բ/ Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 11բաժնի 1 խմբի 2 դասի տնտեսագիտական դասակարգման 4891 <<Պահուստային միջոցներ>> հոդվածի տարեկան գումարը նվազեցնել 16000000/տասնվեց միլիոն/ դրամով՝ սահմանելով 22400000 /քսաներկու միլիոն չորս հարյուր հազար/ դրամ:

1. Բյուջետային ծախսերում կատարել 47000000 /քառասունյոթ միլիոն/ դրամի չափով ավելացումներ, որից՝

ա/ Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 06 բաժնի 3 խմբի 1 դասի տնտեսագիտական դասակարգման 5113 <<Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում>> հոդվածի տարեկան գումարը ավելացնել 29000000 /քսանինը միլիոն/դրամով, սահմանելով 65000000/ վաթսունհինգ միլիոն/ դրամ, իսկ տնտեսագիտական դասակարգման 5134 <<Նախագծահետազոտական ծախսեր>> հոդվածի տարեկան գումարը ավելացնել 1000000 /մեկ միլիոն/ դրամով՝ սահմանելով 3500000/երեք միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ:

բ/ Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 1 խմբի 1 դսի տնտեսագիտակամ դասկարգման 4111 <<Աշխատողների աշխատավարձեր և հավելավաճարներ>> հոդվածի տարեկան գումարը ավելացնել 12000000 /տասներկու միլիոն/դրամով՝ սահմանելով 111600000 /հարյուր տասնմեկ միլիոն վեց հարյուր հազար/ դրամ, տնտեսագիտական դասկարգման 4112 << Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ>> հոդվածի տարեկան գումարը ավելացնել 2000000 /երկու միլիոն/ դրամով՝ սահմանելով 6100000 /վեց միլիոն հարյուր հազար/ դրամ, իսկ տնտեսագիտական դասկարգման 5134 <<Նախագծահետազոտական ծախսեր>> հոդվածի տարեկան գումարը ավելացնել 1000000 /մեկ միլիոն/ դրամով՝ սահմանելով 1000000 /մեկ միլիոն/ դրամ:

գ/ Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի 7 խմբի 1 դասի տնտեսագիտական դասկարգման 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածի տարեկան գումարը ավելացնել 2000000/ երկու միլիոն/ դրամով՝ սահմանելով 14200000/տասնչորս միլիոն երկու հարյուր հազար/ դրամ:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

1. ԱՍԼԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
2. ԲԱԲԱՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ԴԱՎԹՅԱՆ ԴԱՎԻԹ
6. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԻՐԱԲ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 55

## ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 10-022-0321-0001 0,46918 ՀԱ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21 կետով.*

**Ավագանին որոշում է՝**

Տալ համաձայնություն
Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Զառիթափ համայնքի Զառիթափ բնակավայրում գտնվող 1 լոտ ծածկագիր՝ 10-022-0321-0001 0,46918 հա այլ հողատեսքը ներկայացնել աճուրդով վաճառքի՝ համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության: Մեկնարկային գին սահմանել հողի կադաստրային արժեքի -50%-ը: Քայլը մեկնարկային գնի -10%-ը:

Կողմ՝ Դեմ՝ Ձեռնպահ՝

1. ԱՍԼԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
2. ԲԱԲԱՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ԴԱՎԹՅԱՆ ԴԱՎԻԹ
6. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԻՐԱԲ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ